

## Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի պատասխաններ՝ 12-րդ դասարան

1. Արտաշատի հիմնադրման օրը Արտաշես արքան հրավիրել էր կարթանգենցի մեծ զորավար Հաննիբալին: Արքան նրա **խորհրդով** էր ընտրել քաղաքի տեղանքը. այն կառուցվելու էր **ինք** բլուրների վրա՝ Երասխի ու Մեծամորի՝ միմյանց **խառնվելու տեղում**:

Պարսպի հիմնափոսի մեջ գցվող հայկական հնամենի **մասունքներից** (ասում են՝ դրանք ամրացնում են **որմերը**) զորավարը մի ուլունք վերցրեց՝ մուգ կարմիր, և ասաց.

- Սա դեղձի կորիզից է **տաշված**. երևի ձեր նախնիներն այդ համեղ պտուղը Պարսկաստանից են բերել:

- Մենք խաղաղասեր ժողովուրդ ենք, միշտ բարյացակամ ենք եղել **հարևանների նկատմամբ**, անգամ մրգատու ծառեր ենք նվիրել՝ ցանկանալով նրանց երկիրը ևս **հարստացնել** քաղցրահամ բարիքներով, դրացիները, սակայն, ապերախտ են գտնվել. նրանք առիթը բաց չեն թողել **սեփականելու մեր կողմից** ստեղծված ամեն լավ **բան**, - հազիվ զսպված վրդովմունքով պատասխանեց Արտաշեսը և շարունակեց, - դեղձը հայկական պտուղ է: Կարող եմ հաստատել ասելիքս պարսկական մի **ասացվածքով**. «Ո՛չ հայն իր դեղձենուն կխփի, ո՛չ պարսիկը՝ իր **դասերը**»: Չէ՞ որ դեղձենի ունեցող պարսիկն այսպիսի բան չէր ասի: Իսկ հայկական դեղձը Եվրոպա արտահանելիս Հայաստանը Պարսկաստանի գերիշխանության տակ էր. պարզ չէ՞, որ այն **պիտի համարվեր պարսկական**:

- Հույն իմաստասեր Թեոֆրաստը լսած լինե՞ր այս առածը՝ չէր գրի, թե դեղձը Պարսկաստանից են բերել Հունաստան ու անվանել *պերսիկ* կամ *պարսկական սալոր*, - շարունակեց զրույցը Հաննիբալը և ավստասանքով ավելացրեց, - դեղձուտները **Հայաստանում** լինեն, և դեղձը պերսի՞կ կոչեն. անարդար է:

- Հզորները միշտ են եղծել աշխարհի դեմքը, - տխրությամբ հարեց արքան:

2. **խորհրդով** – հիմունքի պարագա, **ինք**-որոշիչ, **խառնվելու տեղում**- բացահայտիչ, **մասունքներից** – անջատման խնդիր, **որմերը**- ենթակա, **տաշված**- ստորոգելի, **հարևանների նկատմամբ**- հանգման խնդիր, **հարստացնել**- ուղիղ խնդիր **սեփականելու**- հատկացուցիչ, **մեր կողմից**-ներգործող խնդիր, **բան**-ենթակա, **ասացվածքով**- միջոցի խնդիր, **դասերը** - հանգման խնդիր, **պիտի համարվեր պարսկական**- բաղադրյալ ստորոգյալ, **Հայաստանում**- ստորոգելի,

3. **հենց**- շաղկապ, վերաբերական  
**ասես**- շաղկապական բառ, վերաբերական,  
**նախքան**-շաղկապ, կապ,  
**էլ**- շաղկապ, մակբայ

4. խոխոջալ, հագենալ, սահմոկել կարկամել, խորշոմել, վհատվել, լվացվել, քրթմնջալ, ոգորել

5. **որ շաղկապ**՝ 1. Մեկնական՝ Պատմեց, որ դժվար ճանապարհ էր անցել: 2. Նպատակի՝ Մոտացավ, որ օգնի: 3. Ժամանակի՝ Մութը որ ընկնի, խարույկ կվառենք: 4. Պայմանի՝ Որ անձրևը չդադարի, կպատսպարվենք քարանձավում: 5. Պատճառի՝ Տխրեց, որ որդիները հեռացան:

6. **գործիական հոլով**- 1. միջոցի խնդիր՝ գրիչով գրեց, 2. ներգործող խնդիր՝ ձյունով ծածկվեց, 3. ձևի պարագա՝ Վազելով մոտեցավ, 4. հիմունքի պարագա՝ Նրա պահանջով փոխեցինք երթուղին, 5. որոշիչ՝ Մտով կարկանդակ գնեցի, 6. տեղի պարագա՝ Ձորով բարձրացանք վերև, 7. ժամանակի պարագա՝ Երկու օրով մեկնելու եմ Գյումրի:

7. **խանդակ**- երկար խոր փոս, պարիսպների շուրջը փորված խրամ  
**գուպարել**- կովել, ոգորել, մրցել  
**դստիկոն**- վերնահարկ, վերնատուն, ձեղնահարկ, թատերասրահներում վերնի հարկի պատշգամբ  
**արջառ**- ջահել եզ,  
**անգոսնել**- արհամարհել, քամահրել, անուշադրության մատնել  
**վաշխառու**- տոկոսով պարտք տվող անձ, փխբ. կեղեքիչ  
**նափորտ**- կրոնավորի շուրջառ, փիլոն, սքեմ  
**տիվանդորր**- ցերեկվա անդորր, ցերեկային հանգիստ  
**խծրծանք**- անհիմն մեղադրանք, ամբաստանություն, զրպարտություն, սադրանք  
**ստամբակ**- 1. ապստամբ, ընդվզող, անհնազանդ, ըմբոստ 2. անկարգ, սանձարձակ, ստահակ

8. **քավության նոխազ** - նշ. անմեղ մարդ, որին մեղադրում են ուրիշիկատարած հանցանքի համար:

Ըստ հին հրեաների՝ մարդու մեղքերի թողության համար հոգևորականը ձեռքը դնում էր այծի գլխին և դրանով նրան փոխանցում մարդու մեղքերը, որից հետո այծին քշում էին անապատ:

Ըստ Աստվածաշնչի, որտեղ ասված էր, որ նոխազը անօրենություններն իր վրա կվերցնի, կտանի անկոխ երկիր և Ահարոնը նրան անապատ կարձակի:

**տանտալոսյան չարչարանք**- նշ. *անտանելի՝ դժոխային տանջանքներ,*

Ըստ հունական դիցաբանության՝ Փոյուզիայի թագավոր Տանտալոսը Չեսի կողմից դատապարտված էր դժոխքում հավիտենապես տանջվելու քաղցից և ծարավից: Թեկուզև ջրի մեջ էր մինչև կոկորդը, սակայն հենց թեքում էր գլուխը, ջուրը հեռանում էր, իսկ գլխավերևում կախված պտուղները վեր էին բարձրանում, երբ մեկնում էր ձեռքը:

### Գնահատման չափանիշներ – 12-րդ դասարան

- Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
- Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
- Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
- Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
- Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
- Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
- Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
- Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:

**Ուշադրություն:** Շարադրության մեջ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր, կետադրական, քերականական, բառագործածական և ոճական սխալների համար՝ 0,25 միավոր, սխալ տողադարձի համար՝ 0,1 միավոր: